ԳԱՌԵԱՍՊԵՏԵՐ

ԳՐԵՑ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԻՐԱԶ

Ինչ էլ ասէք՝ Մասիս կ՚ասեմ, սուրբ է իմ սէրն անխոտոր,
Լեռ է յոյսիս ողնաշարը, ինչպէս իմ լեռն անխոտոր,
Տիեզերքի հետ չեմ փոխի մի բուռ ձիւնն էլ Մասիսի,
Խոտորին են խոտոր թուում իմ խոտորներն անխոտոր։

* * *

Մի աչքս լաց, մէկս ծիծաղ՝ այսպէս դարս երեւաց՝
Ուր գնացի՝ մի հայով էլ՝ հայ աշխարհս երեւաց,
Թէկուզ օտար երկրում մեռած՝ ինչ հայ, իրաւ, թէ չասի՝
— Գերեզմանիս մութի մէջ էլ Մասիս սարս երեւաց։

* * *

Ո՞վ լոխմանի, վիրաւոր է Մասիս սարը երդիս մէջ,
Հառաչում է դեռ վիրաւոր իմ քնարը կեանքիս մէջ,
Ցաւս լոկ մի ակնից չի դայ՝ լոկ հայը չէ վիրաւոր,
Քանի՞ կոյր էք, որ չէք տեսնում ողջ աշխարհը վէրքիս մէջ։

* * *

Ա՜խ, չէ, քոյր իմ, ինչ էլ երգեմ՝ ինձ հալածեն պիտի դեռ,
Իմ Մասիսից քարեր առած՝ ինձ քարկոծեն պիտի դեռ,
Մի բուռ մարդոց ծով նախանձն է բախիս նաւը վար սուզում՝
Թէ՞ դարն է քար, որ անդադար կեանքս խոցեն պիտի դեռ։

* * *

Ով Արարատ ունի սրտում՝ իր հայ լեզուն չի մոռանայ,
Ում բերանում է հայ լեզուն՝ Մասիսն անտուն՝ չի մոռանայ,
Մասիսն Հայոց աստուածն է վեհ, Սիսը՝ Հայոց աստուածուհին,
Հայն՝ անաստուած այս դարում էլ իր Աստծուն չի մոռանայ։

Լցնում էի դաւից գինին, խմում էի ես մենակ,
Մի մարդ չկայ՝ թաս-թասի տանք ու յիշեցի քեզ մենակ,
Խայեամ, բայց ինձ դաւս լսեց, լեզու առաւ, ղլղլաց՝
— Ինձ զարկ, ես էլ քեզ պէս էի, ինձ հետ երբեք չես մենակ։

* * *

Թէկուզ մի բուռ այս հողի մէջ քանի կռուի արիւն կայ,
Աւա՜ղ, այս մի բուռ հողի մէջ հազար ու մի սիրուն կայ,
Հազար ու մի սերնդաշար՝ մեռած կեանքեր բիւր-հազար,
Բայց այս մի բուռ սուրբ հողի մէջ հազար ու մի դարուն կայ...

* * *

Լոկ մի բանի համար կ՚ուզեմ անմահութիւն ունենալ՝
Այս աշխարհում դարը մի օր կենդանութիւն ունենալ,
Որ քեզ նորից դամ օգնութեան, ազգ իմ, երբ որ նեղն ընկնես,
Ահա ինչու չէի ուզի յաւիտեան քուն ունենալ։

* * *

Շիրազն ասաց՝ Մասիսն է սիւնն Հայաստանի, իմացէք,
Հայերը քաշող մաղնիս է ձիւնն Հայաստանի, իմացէք,
Բաւ է, Հայեր, ցրուած մնաք մատներիս պէս, սփիւռքուած,
Բռունցքուելն է յաւերժութիւնն Հայաստանի, իմացէք։

* * *

Ազգիս թուի փոքրութիւնը երգիս վրայ ծանրացաւ,
Անյուսութեան արձանի պէս մտքիս վրայ ծանրացաւ,
Միք չար խնդայ, ով մեծ թուեր, ոսկու պէս է նա փոքրիկ,
Որ իր վրայ բիւր ազգերի աչք ու ղրահ ծանրացաւ...

* * *

Ոչ պուրպուրէ գինով բաժակն է խնդութիւնը մարդուս,
Ոչ փրփուրէ փառքի պսակն է յաղթութիւնը մարդուս,
Թէ խնդութիւն, թէ յաղթութիւն մի զոյգ գիսակն է կոյսի, —
Քան դարնան սիրոյ հասակն է քաղցրութիւնը մարդուս։

* * *

Կինը ձի է՝ լաւ հեծնողին մինչեւ դրախտ կը տանի,
Հազար ու մի գիշերների արքայի թախտ կը տանի, —
Ի՞նչ եմ անում մի գիշերուայ թեկուզ դրախտ տանող ձին,
Ասա՝ կինը մարդ մնայ, մարդ՝ սիրոյ դրախտն ինձ հանի։

* * *

Այնքան խմեմ, որ կարօտած հոգիս գինով մի դաւ լինի,
Ինձ շուրթերիդ ափերն հանող սէրս հարբած մի նաւ լինի,
Ինձ շուրթերիդ մանուկ ճամբորդ՝ դանի փարոսն հուր աչերուդ՝
Բախտս՝ նաւում մանուկ ճամբորդ՝ սիրոյ դրախտն ինձ հանի։

* * *

Այնքան խմեմ, որ կարօտած հոգիս գինով մի դաւ լինի,
Ինձ շուրթերիդ ափերն հանող սէրս հարբած մի նաւ լինի,
Ինձ շուրթերիդ մանուկ ճամբորդ՝ դանի փարոսն հուր աչերուդ՝
Բախտս՝ նաւում մանուկ ճամբորդ՝ սիրոյ դրախտն ինձ հանի։

* * *

Ձեռքս բռնես՝ ինձ ուի հանես եւ համբոյրդ համբաւ լինի։

© National Library of Armenia

Հետեւում են ինձ անդադար, հոտոտում են անընդմէջ,
Իմ խոհերի խոհն են փնտռում, որ վանդակեն կեանքս խեղճ,
Ի՞նչ իմանան անխիղճները, որ վաղուց եմ վանդակուած՝
Իրենց աչքերն են վանդակս, որ սեղմում են ինձ անվերջ...

* * *

Ճերմակ ջարդով ինչ էլ անէք՝ եւ շուշանն է ապրելու՝
Հայոց շուշանն՝ ինչպէս Պարսից ատրուշանն է ապրելու,
Մաշտոցասուրբ հայ լեզուս էլ արեւի չափ է անմահ,
Շղթայուած էլ Մասիսն՝ ինչպէս Տեան–Շանն է ապրելու:

* * *

Ա՜խ, ամէն օր ուռենու պէս կռանում եմ, ամէն օր,
Կաղնեկարօտ յոյսիս առուից հեռանում եմ ամէն օր,
Մահից յետոյ ի՞նչ եմ անում անմահութիւնն անմարմին,
Անմահութիւնն ի՞նչ բալղամ է, երբ մեռնում եմ ամէն օր:

* * *

Դարս մեծ էր, մարդիկ մանր, դարս մանր, սիրտս մեծ,
Քանի անգամ արեւ սիրտս աստղերի պէս փշրուեց,
Ինձ ուզեցին հաւասարել մանրութեանը իրենց կոյր,
Բայց աստղս այնքան ըմբոստ շողաց՝ դիշերն ինչքան ուշ ցրուեց...

* * *

Գինին թոյն է մարմնիս համար, հոգիս շոյող է գինին,
Հոգուս համար մեղր ու նեկտար, լայս մաշող է գինին:
Թեկուզ անմահ լինի հոգիս, բայց մի թասով մահանայ՝
Թող մահանայ, մի թաս էլ տուր, վիշտս թաղող է գինին:

* * *

Թէ ամէն սիրտ ինձ պէս խորհէր՝ աշխարհն այսպէս չէր լինի,
Իմ սիրտն այսքան մարդակարօտ ու վշտակէզ չէր լինի,
Ատոմն ինձ պէս բանուոր կը ընէր, ոչ թէ գինուոր ձեզ նման,
Ով դու վաղուայ աշխարհաւեր, վիշտն ինձ ու քեզ չէր լինի:

* * *

Երբ խօսում ես՝ այնպէս խօսիր, որ թուայ հով է խօսում,
Ա՜խ, մի՛ խօսիր վերջի մասին՝ վերջը մահով է խօսում,
Կեանքից խօսիր, սիրուց խօսիր, օրօրոցից, համբոյրից,
Մահուան մասին անմահութիւնն անգամ ահով է խօսում:

(Շարունակելի)

ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ ԱՍՏԵՂԱԳԷՏ Ս. ՂԱԶԱՐԻ ՄԷՋ

Բասարգեչարի մէջ ծնած (1908), Թիֆլիսի մէջ միջնակարգ ուսումները կատարած, Լենինկրատի մէջ համալսարանական ընթացքի հետեւած եւ Երեւանի մէջ իր հասունութեան տարիներուն փառքի դահին վրայ բազմած՝ Վ. Համբարձումեան, 1947էն ետքը՝ միջազգային համբաւի տէր նշանաւոր դէմք մը դարձաւ:

Անցնող տարւոյն մէջ՝ անոր ծննդեան 60ամեակը տօնուեցաւ Հայաստանի մէջ եւ Սփիւռք: Այդ յոբելեանը առիթ մը եւ դաղաւ անոր դէմքին հսկայական ճառագայթումով լուսաւորելու, եթէ երբեք կային դեռ, մութին մէջ մնացած անկիւններ, ուր չէր տարածուած իր անունը: Համաշխարհային համբաւի տիրացած այս Հայը, փափաք ունեցաւ Ս. Ղազար այցելելու, Զամչեաններու, Բագրատունիներու եւ Ալիշաններու շունչով կենսաւորուած գրական ու գիտական այս միջավայրը: Գիտութեան մարդը, փատուվայի համալսարանին ուսուցչապետներու ընկերակցութեամբ, Մայիս 3ին Ս. Ղազար ժամանեց, ուր արժանաւոր ընդունելութիւն մը կատարուեցաւ: Միաբանութեան Ընդհ. Աբբահայր՝ Գերպ. Հմայեակ Վրդ. Կէտիկեան, բարի գալուստի ուղերձ մը հիւսեց անոր.

Մեծայարգ Նախագահ
Հայկական Հանրապետութեան
Գիտ. Ակադեմիայի

Ձեր այսօրուան անակնկալ, բայց շատոնց սպասուած եւ ուրախառիթ այցելութիւնը, պարզ այցելութենէ մը աւելի, մեզի համար խորհրդանշական հանդիպում մըն է, հայ մշակոյթի զարգացման ու պահպանման նուիրուած՝ երկու հաստատութիւններու միջեւ:

Դուք, արժանաւոր Նախագահն էք Հայկական Ակադեմիային, որ շուրջ 25 տարիներէ ի վեր՝ ի սպաս դրած էք Ձեր անձն ու բոլոր կարողութիւնները՝ անոր յարաճուն վերելքին, հայագիտութեան բոլոր մարզերուն մէջ:

Ձեր կեանքի վաթսուներորդ տարեդարձը առիթ եղաւ՝ որ Հայրենիք եւ Սփիւռք միասին խորհրդածեն այս բոլորին մասին, ու յայտնեն իրենց խանդավառ գնահատանքը՝ Հայութեան այս մեծ զաւակին անձին ու գործին նկատմամբ:

Ակադեմիայի շրջանակներէն անդին, Դուք հսկայական աշխատանք մըն ալ կը տանիք աստղագիտութեան մարզին մէջ, եւ հայ հանճարին արժէքները միջազգա-



Գերպ. Աբբահայրը՝ Վ. Համբարձումեանը «Պատուոյ անդամ» կը հռչակէ Ս. Ղազարի Հայկական Ճեմարանին:

© National Library of Armenia